ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

LOGISTICS SUPPORT DEPARTMENT OF
MINISTRY OF DEFENCE OF THE
REPUBLIC OF ARMENIA
**ДЕПАРТАМЕНТ МАТЕРИАЛЬНО-
ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email :depart@mil.am
Հեռ. (+37410) 29-45-45
Ֆաքս. (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багревард 5,
Email: depart@mil.am
Tel.Тел. (+37410) 29-45-45
Fax.Факс. (+37410) 29-46-13

№ 241
"23" 01 2018թ.

«ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն
Կ. Մեհրաբյանին
Հասցե՝ ք. Երևան, Լենինգրադյան 23/13 մուտք 2, 50
էլ. հասցեն՝ mehrabyan_karen@mail.ru
Հեռ.՝ +37477-61-04-00
ՀՎՀՀ՝ 02627826

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.05.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-20/1-2 ծածկագրով գնման պայմանագրի(այսուհետ՝ նաև Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մինչև 30.09.2017թ. մատակարարել 15,000 հատ «Բահ»՝ 16,500,000 (տասնվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Ըստ պատասխանատու ստորաբաժանման համապատասխան եզրակացության՝ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 18.12.2017թ. մատակարարված բահերը չեն համապատասխանել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին: Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան բահերի մատակարարում «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.01.2018թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է ՇՀԱՊՁԲ-20/1-2 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 643,500 (վեց հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժ և 82,500 (ութսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանք:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ից կգանձվի նաև Պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 1,650,000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ